## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

---

# ՈՐՈՇՈՒՄ

«03» հուլիսի 2026թ. N ՄՊ/368-Ա

ք. Արմավիր

### ՆԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ «ՀՈՒՇԱԿԵՐՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետով, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, հիմք ընդունելով Նարինե Խաչատրյանի 2026 թվականի հուլիսի 2-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ ե մ՝**

1. Նարինե Խաչատրյանին 2026 թվականի հուլիսի 3-ից ազատել «Հուշակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2026 թվականի մայիսի 14-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:
2. «Հուշակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ